

Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հոգում: Բայց կմարի լույսը, եթե դուք մոռանաք սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը՝ ձեզ պաշտպան: Հիշեցեք...

Մետրոպ Մաշտոց (ըստ Սերո Խանգաղյանի)

Հինգշաբթի
10 փետրվարի 2022թ.
№ 3 (569)

ՀԻՄՆԱԴՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Ա՛խ, արթնանում է հաճախ ձևը, - մեռած համարվող. - Կյանք, քո ծիլերը հաճախ - հին կերպարանք են հազնում...

ԵՂՈՇԵ ՀԱՐԵՆՑ

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքում ձմեռային գորակոչը կազմակերպվել է պատշաճ մակարդակով



Սյունիքի մարզում միշտ էլ ուշադրությամբ են հետևել բանակաշինությանը, մասնավորապես՝ հերթական գորակոչներին, զորահավաքներին...

Արցախյան երրորդ պատերազմից հետո հայոց ազգային բանակի հետ կապված ամեն մի հարց ավելի սրտամոտ է դարձել յուրաքանչյուր սյունեցու համար: Եվ դա բնական է... Ձմեռային գորակոչի արդյունքներին, սպասվող զորահավաքի նախապատրաս-

տական աշխատանքներին ծանոթանալու համար փետրվարի 7-ին «Սյունյաց Երկիր» ստեղծագործական խումբն այցելեց ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանում:

Այն գլխավորում է գնդապետ Վահե Աղալարյանը, ով այդ պաշտոնը ստանձնել է դեռևս Արցախյան երրորդ պատերազմի օրերին և հնարավոր ամեն ինչ արել ու անում է՝ ստորաբաժանման արդյունավետ գործունեությունն ապահովելու, առաջադրված խնդիրներն ըստ

պատշաճի կատարելու համար: Գնդապետ Վահե Աղալարյանից էլ փորձեցինք ստանալ ներկայումս մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը:

— Պարոն Աղալարյան, նախ՝ ի՞նչ արդյունքներ գրանցեցիք ձմեռային գորակոչի ավարտին: Մինչ այդ, սակայն, ուզում եմ Ձեզ շնորհավորել՝ գնդապետի զինվորական կոչմանն արժանանալու պատեհ առի՞ Շարունակությունը՝ էջ 4

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ. «Թուրքիայի և Ադրբեջանի հեռահար նպատակը Սյունիքն է, ես դրանում չեմ կասկածում»

Հարցազրույց արևելագետ-թուրքագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանի հետ:

— Պարոն Սաֆրաստյան, նախ՝ շնորհակալություն՝ մեր լրատվամիջոցին հերթական անգամ հարցազրույց տալու պատրաստակամության համար: Դուք ճանաչված թուրքագետ և օսմանագետ եք, Թուրքիայի նոր և նորագույն պատմությանը, նաև այդ երկրի

արտաքին քաղաքականությանը նվիրված բազմաթիվ գիտական աշխատությունների և հետազոտությունների հեղինակ: Ուստի և՛ հետաքրքիր են Ձեր նկատառումները հայ-թուրքական հարաբերությունների ներկա ընթացքի վերաբերյալ:

Բայց փորձե՞ք նախևառաջ անդրադառնալ պատմական հենքին: Այսպես՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքվեց բարեկամության պայմանագիր՝ մի կողմից Ադրբեջանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի և Վրացական ԽՍՀ-ի,



մյուս կողմից՝ Թուրքիայի միջև, և, իհարկե, Ռուսաստանի մասնակցությամբ: Դա, կարելի է ասել, կրկնում էր 1921, 1925 թվականների Սովետաթուրքական պայմանագրերի հիմնական դրույթները: Շարունակությունը՝ էջ 5

Freedom House-ը մտահոգված է...

Freedom House-ին մտահոգել են Հայաստանում պետծառայողներին վիրավորելու համար հարուցված 260 քրեական գործերը: Իրավապաշտպան կազմակերպությունը ՀՀ խորհրդարանին կոչ է արել չեղարկել օրենսդրական այդ նորմը:

Տարածած հաղորդագրության մեջ Freedom House-ը հիշատակում է փետրվարի սկզբին դատարանի կայացրած վճիռը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու ՀՀ նախագահի թեկնածու առաջադրված բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարար Վահագն Խաչատրյանին վիրավորելու համար ՀՀ քաղաքացուն 1000 դոլարով տուգանելու վերաբերյալ:

«Մեծ մտահոգությամբ ենք նշում ՀՀ քաղաքացու առաջին դատվածությունը՝ Քրեական օրենսգրքի նոր հոդվածով, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետծառայողներին վիրավորելու համար: Միայն 2021 թվականին այս դրույթի կիրառումը, որի արդյունքում հարուցվել է ավելի քան 260 քրեական գործ, վկայում է Հայաստանում ժողովրդավարական նորմերի ակնհայտ դեգրադացիայի և խոսքի ազատության նկատմամբ սպառնալիքի մասին», - ասվում է հայտարարության մեջ:

Freedom House-ը Հայաստանի խորհրդարանին կոչ է անում չեղարկել հիշյալ հոդվածը՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքները, ԵԱՀԿ-ի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երկրի ստանձնած պարտավորությունները ոտնահարող դրույթ: //

Հայաստանցիների 34 տոկոսը կողմ է՝ Արցախը միանա Հայաստանին

ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտը (International Republican Institute - IRI) սոցիալոգում է իրականացրել Հայաստանում հարցեր ուղղելով պետական ինստիտուտների հանդեպ վստահության, հարևանների հետ հարաբերությունների, Արցախի ապագայի, տնտեսության և այլ թեմաներով: Արցախին (հարցման մեջ՝ Լեռնային Ղարաբաղ) վերաբերյալ հարցեր են ուղղվել այն մասին, թե որքա՞ն կարևոր է դարաբաղյան հակամարտության կարգավորումն առաջիկա տասը տարում, և ո՞րն է հայաստանցիների համար լուծման ընդունելի տարբերակը:

Այսպես, հարցվածների 35 տոկոսը կարծում է, որ ընդունելի տարբերակ է Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության ճանաչումը: 34 տոկոսի կարծիքով՝ ընդունելի տարբերակ է Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին՝ որպես շրջան:

Ռուսաստանի կազմում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հաստատման մասին նշել է հարցվածների 11 տոկոսը:

Ներկայիս ստատուս բվոյի պահպանման օգտին է հարցման մասնակիցների 1 տոկոսը: Հարցվածների 82 տոկոսը կարծում է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը շատ կարևոր է առաջիկա տասը տարում Հայաստանի ապագայի համար:

Հարցումն իրականացվել է 1 512 քաղաքացիների շրջանում, ընդգրկել է Նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածը: //



Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախչիյանը կալանավորվել է

Բարձրագույն դատական խորհուրդը թույլ է տվել կալանավորել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախչիյանին:

ԲԴՆ-ն բավարարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախչիյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու և նրան ազատությունից զրկելու թույլտվություն ստանալու վերաբերյալ 33 գլխավոր դատախազի միջնորդությունները: Լշենք, որ միջնորդությունների քննարկումը ԲԴՆ-ն սկսել է հունվարի 31-ին՝ ժամը 17:00-ից սկսած: Երբ քննարկել, ապա բավարարվել է Բախչիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլտվության մասին միջնորդությունը, ապա՝ մինչև կեսգիշերն անց ԲԴՆ-ն քննել է ազատությունից զրկելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը և խորհրդակցական սենյակում որոշում կայացրել՝ այն բավարարելու:

մասին: Այլ խոսքով՝ դատավորի անձեռնմխելիությունը հաղթահարված է և վարույթն իրականացնող մարմինը կարող է հետապնդում իրականացնել և կալանավորման միջնորդություն ներկայացնել դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Դավիթ Արղամանյանի նախագահությամբ բավարարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախչիյանի (լիազորությունները կասեցված են) նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ԱԱԾ քննիչի միջնորդությունը: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, ավելի վաղ, Բարձրագույն դատական խորհուրդը թույլ է տվել դատավոր Բորիս Բախչիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել, ինչպես նաև ազատությունից զրկելու համաձայնություն է տվել:

Լշվում է, որ Բախչիյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հիմքն այն է, որ նա խափանման միջոցի կարգ է խախտել: Մի քրեական գործով ամբաստանյալը հրաժարվել է դատական նիստին ներկայանալ, դատավոր Բախչիյանն էլ նրան կալանավորելու մասին որոշում է կայացրել: Որպես վարույթ իրականացնող՝ դատավոր Բախչիյանն այդպիսով չի ապահովել ամբաստանյալի լվելու իրավունքը:

Չիշեցնենք, որ 33 գլխավոր դատախազը 33 ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, 33 ԲԴՆ-ին ներկայացրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Բորիս Բախչիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն տալու միջնորդություններ:

Դատավորների միությունը մտահոգություն է հայտնել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախչիյանի նկատմամբ դատախազության և ԱԱԾ քննչական դեպարտամենտի կողմից քրեական հետապնդում իրականացնելու և անձեռնմխելիությունից (այդ թվում անձնական ազատությունից) զրկելով զուգորդված քրեական հետապնդում իրականացնելու գործընթացի հետ կապված, որը պայմանավորված է դատավորի գործունեության հետ:

Լշենք, որ դատավոր Բորիս Բախչիյանի վարույթում է գտնվում Միսական ջոկատի լեզեղյար հրամանատար Աշոտ Մինասյանի՝ Աշոտ Երկաթի գործը: Օրերս դատավոր Բախչիյանը որոշում էր կայացրել՝ Մինասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին, ինչից հետո Մինասյանն ազատ է արձակվել: Դատավոր Բորիս Բախչիյանի վարույթում են գտնվում նաև Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի և Գորիսի փոխքաղաքապետ Մենուա Զվսեփյանի վերաբերյալ քրեական գործերը:

ԻՀԱԲԵԼ ՍԱՅԱԿՅԱՆ



Առուշ Առուշանյանը կմնա կալանքի տակ

Վերաքննիչ քրեական դատարանը՝ դատավոր Ռուբիկ Մխիթարյանի նախագահությամբ, մերժեց Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի նկատմամբ գրավ կիրառելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը, տեղեկացնում է Փաստինֆոն:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ 2021թ դեկտեմբերի 28-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Գնել Գասպարյանի նախագահությամբ, մերժել է Առուշ Առուշանյանին 30 մլն 33 դրամի չափով գրավի դիմաց ազատ արձակելու մասին պաշտպանների միջնորդությունը: Եվ սա այն դեպքում, երբ նախաքննության ընթացքում Առուշանյանի դեմ ցուցմունք տված Լուսինե Ավետյանը դատարանում արդեն ցուցմունք է տվել՝ հրաժարվելով նախաքննական իր ցուցմունքից: Ավելին՝ նա հայտարարել է, որ զրջում է Առուշանյանի վերաբերյալ սխալ ցուցմունք տալու համար: Առաջին ատյանի դատարանը գտել էր, որ գործով դատակոչված ևս 6 վկաներ կան, որոնք պետք է հարցաքննվեն:

Պաշտպանները վերաքննիչ բողոք են ներկայացրել՝ պահանջելով բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումն ու Առուշանյանի նկատմամբ գրավ կիրառել՝ 80 մլն դրամի չափով:

Թող վերցնեն Գալչյանի քարտեզները, կտեսնեն, որ այդ տարածքները եղել են Խորհրդային Հայաստանի կազմում

2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո 33 արագորձնախարարության՝ սահմանակից երկրների վարչության այժմ նախկին պետ Արսեն Ավագյանի նախագահությամբ դեղին-տաքիայի, դեմարկացիայի գործընթացին միտված պարբերական քննարկումներ են կազմակերպվել՝ մասնագետների մասնակցությամբ: Այդ քննարկումներին մասնակցել է նաև 33 ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Սակայն անցած տարվա հոկտեմբերից, երբ Արսեն Ավագյանը նշանակվեց Իրանում 33 դեսպան, Մելքոնյանի խոսքով, այլևս քննարկումներ չեն հրավիրվում: Չիշեցնենք, որ Սյունիքում նոյեմբերին տեղի ունեցած մարտերից հետո Ռուսաստանը հորդորեց Հայաստանին ու Ադրբեջանին՝ շուտափույթ սահմանների դեմարկացիա և դեղին-տաքիա սկսել: Նիկոլ Փաշինյանն էլ հայտարարեց մասնագիտական հանձնաժողով ձևավորելու մասին: Մինչ այս պահը, սակայն, այդ հանձնաժողովից նորություն չկա: Աշոտ Մելքոնյանից հետաքրքրվեցինք՝ իրեն առաջարկել են հանձնաժողովին անդամակցել, գուցե՝ խորհրդատվական նպատակով:



յանի գլխավորությամբ, և մեր ձեռքի տակ եղած նյութերը, քարտեզները տրամադրել ենք իրենց: Ոչ միայն ես եմ մասնակցել, այլև մեր ինստիտուտից աշխատակիցները: – Հանձնաժողովը ե՞րբ է սկսել գործունեությունը, արդեն ավարտել է աշխատանքները, ի՞նչ պարբերականությամբ էիք նիստերին մասնակցում խնդրում եմ մանրամասնել: – Արսեն Ավագյանը երբ նշանակվեց Իրանում 33 դեսպան, դրանից հետո ես լուր չունեմ այդ հանձնաժողովից: 20 թվականի նոյեմբերի 9-ից հետո է ձևավորվել, ես անձամբ մի

երեք նիստի եմ մասնակցել: Մեզից քարտեզներ են ուզել, այդ խնդրով քննարկումներ են եղել, մեր ինստիտուտի աշխատակիցներն անվերեն, ռուսերեն, հայերենով հայ-ադրբեջանական սահմանների վերաբերյալ գիրք են տպել՝ ինստիտուտի փոխտնօրեն Կարեն Խաչատրյանի գլխավորությամբ, այսինքն՝ մենք մեր օգնությունը ցույց ենք տվել: – Իսկ ի՞նչ եք կարծում, դեմարկացիայի և դեղին-տաքիայի՝ ապագայում ստեղծվելիք հանձնաժողովի կազմում ձեր մասնակցությունն անհրաժեշտ է, նկատի ունե՞մ պատմաբանների, որով-

հետև խոսք է գնում, որ ՊՆ-ն է զբաղվում դրանով, և ինքն էլ ձևավորելու է կազմը:

– Եթե իրենք դրա կարիքը չունենան, մեր մասնակցությունը ո՞նց է լինելու: Կարծում եմ, որ մասնագետների մասնակցությունը պարտադիր է, և ես գիտեմ, որ պաշտպանության նախարարությունն էլ ունի հենց այդ հարցերով զբաղվող նեղ մասնագետներ, մնացած պրոցեսն ընթանում է առանց մեր մասնակցության, հետևաբար, ավելին չեմ կարող ասել: Մենք, որպես այդպիսին, խորհրդատվությունն ապահովում ենք նաև հիմա, երբ մեզից խորհրդատվություն են ուզում, տրամադրում ենք:

– Իսկ ի՞նչ նյութեր եք տրամադրել, օրինակ, դրանց մեջ կա՞ այնպիսի քարտեզ, որով Գորիս-Կապան ճանապարհի որոշ հատված գտնվել է Ադրբեջանի կազմում:

– Մենք տրամադրել ենք 20-ականների քարտեզներ և հետագայի վերաբերյալ քարտեզներ: Օրինակ, ես Լուսինեի գեներալի քարտեզներ եմ ունեցել՝ Սովետական Միության, որը ևս փոխանցել եմ իրենց: – Զարտեզներ տրամադրելուց բա-

Ուրեմն թող վերցնեն Ռուբեն Գալչյանի հրապարակած քարտեզները և կտեսնեն, որ այդ տարածքները եղել են Խորհրդային Հայաստանի կազմում, հետո՝ 26-ից հետո, անցել են Խորհրդային Ադրբեջանին, այդ թվում՝ լճերի հատվածը, որ առաջ Վարդենիսի շրջանի մեջ էր մտնում, իսկ հիմա՝ Զարվաճառի շրջանի:

Ադրբեջանը հիմա էլ մշակութային եղեռն է սկսել...



Մայր Աթոռը միջազգային հանրությանը կոչ է անում խստագույն արձագանքել Բաքվի մշակութային անթաքույց եղեռնագործությանը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտարարությամբ դիմում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ ներգրավված բոլոր երկրներին, առաջին հերթին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետություններին, քոյր եկեղեցիներին ու կրոնական կառույցներին, միջազգային մասնագիտացված կազմակերպություններին՝ խստագույն արձագանքելու Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային անթաքույց եղեռնագործությանը:

«Արմենարես»-ի հաղորդմամբ՝ «Ֆեյսբուք»-ում Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի էջում հրապարակված հայտարարության մեջ նշվում է. «Օրերս Ադրբեջանի իշխանությունները, ի դեմս մշակույթի նախարարի, հանդես են եկել հերթական հակահայկական նախաձեռնությանը:

Համաձայն վերջինիս հայտարարության՝ Ադրբեջանում ձևավորվել է տեղի և արտերկրյա մասնագետներից կազմված «Աղվանական պատմության և ճարտարապետության մասնագետների աշխատանքային խումբ», որի նպատակն է, այսպես կոչ-

ված, աղվանական կրոնական տաճարներից հեռացնել «հայերի թողած կերճ հետքերը»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է ադրբեջանական իշխանությունների սույն նախաձեռնությունը և այն որակում է որպես հակամարդկային ու հակաքաղաքակրթական գործողություն՝ Հայաստանի, Արցախի և հայ ժողովրդի նկատմամբ շարունակական թշնամանքի ու ատելության ընդգծված դրսևորումներով:

Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի քրիստոնեական սրբավայրերի հայկական ինքնությունը գիտակատրեն հաստատված իրողություն է և չի կարող վիճարկված առարկա դառնալ խելամիտ ու առարկայական մտածողության շրջանակներում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դիմում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ ներգրավված բոլոր երկրներին, առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետություններին, քոյր եկեղեցիներին ու կրոնական կառույցներին, միջազգային մասնագիտացված կազմակերպություններին՝ խստագույն արձագանքելու Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային եղեռնագործության անթաքույց այս փաստին՝ կասեցնելու և կանխելու համար վանդալիզմի այս ու նմանորինակ դրսևորումները»:

Կճ, բովանդակային հարցեր է՛լ եք բնակարկել:

– Բնականաբար, բնակարկել ենք՝ երբ են անկլավներն առաջացել, մինչև 26 թվականն ինչ վիճակ է եղել՝ 1920 թվականի դեկտեմբերի 2-ից: Անշուշտ, այդ բոլոր նյութերում մանրամասն այս բոլորի մասին խոսվում է:

– Ի վերջո, կարո՞ղ եք ասել, Գորիս-Կապան ճանապարհի՝ ադրբեջանցիների վերահսկողության տակ հայտնված հատվածը որևէ քարտեզով հայկական չի՞ եղել, եղել է ադրբեջանական, ինչի մասին հայտարարում են 33 բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը:

– Ախր էնպես կատեգորիկ հարց եք տալիս՝ ադրբեջանական ընդհանրապես չի էլ եղել ոչ մի բան, ադրբեջանական ասվածը մի արհեստական գաղափար է, ես ո՞նց պատասխանեմ այդ հարցին, ո՞նց ասեմ՝ ադրբեջանական է եղել:

– Մեր պաշտոնյաները բա ո՞նց են վստահ պնդում, թե Հայաստանի որևէ քարտեզով նշված ճանապարհը հայկական չի եղել:

– Ուրեմն թող վերցնեն Ռուբեն Գալսյանի հրապարակած քարտեզները և կտեսնեն, որ այդ տարածքները եղել են Խորհրդային Հայաստանի կազմում, հետո՝ 26-ից հետո, անցել են Խորհրդային Ադրբեջանին, այդ թվում՝ լճերի հատվածը, որ առաջ Վարդենիսի շրջանի մեջ էր մտնում, իսկ հիմա՝ Քարվաճառի շրջանի: 20-ականներին Խորհրդային Հայաստանը բավականին խեղճ վիճակում էր, Անդրկովկասի Դաշնության մեջ Ադրբեջանի և Կրասնավոդսկի խոսքն էր անցնում, դնում էին Կենտրոնական խորհրդի և հարցը բնակարկում ի վնաս Հայաստանի: Մենք ունենք նաև փաստաթղթեր, որտեղ Հայաստանը բողոք է ներկայացնում, թե ինչու եք առանց մեզ հարցնելու հարցերը, օրինակ՝ լճերի հարցը, լուծելի հոգուտ Ադրբեջանի, վերևից պատասխան էին ստանում՝ «խնդիրը բնակարկվել է և այլևս վերաբնակարկման ենթակա չէ»:

– Ի՞նչ եք կարծում՝ ո՞ր թվականի քարտեզներով կիրականացնեն դեյմիտացիան ու դեմարկացիան:

– Ես չեմ կարող ասել: Բայց եկեք հասկանանք, որ դեյմիտացիա նշանակում է փաստաթղթերի համաձայնեցում կողմերի միջև, եթե դա դեմ տեղի չի ունեցել, ո՞նց կարելի է ասել, թե խնդիրն ինչպես է լուծվելու, որ թվականի քարտեզով: Պետք է նախ դեյմիտացիա լինի, ապա՝ դեմարկացիա:

– Իշխանության ներկայացուցիչների հարցազրույցներից տպավորություն է, որ խոսքը 1975-ի կամ էլ դրանից հետո ընկած ժամանակահատվածների քարտեզների մասին է:

– Ես չեմ կարող ասել, բայց եթե արդեն որոշված լիներ, ինչու էին մեզին այդ քարտեզներն ուզում: Հարցը պետք է իշխանություններին ուղղել:

– Հայկական կողմի շահերից ո՞ր թվականի քարտեզն է բխում, ձեզնից խորհուրդ հարցրե՛լ են:

– Բնականաբար, մենք ասել ենք՝ մինչև 1926 թվականի քարտեզները: Ադրբեջանի համար, իհարկե, ձեռնտու են ամենավերջին քարտեզները, որովհետև իրադրությունը հոգուտ իրենց է փոխվել: Կարծում եմ՝ այս պատճառով էլ պրոցեսը բավական երկար կտևի: Եթե հայկական կողմն անմիջապես համաձայնի, որ 70-ականների քարտեզներն իր համար դեյմիտացիայի հիմք են, նշանակում է սահմանների հարցում, բնականաբար, Ձեր ասած՝ Շուռուղիի ճանապարհի, Վարդենիսի լճերի: Ինչ վերաբերում է Սև լճին, դրա 75 տոկոսը Խորհրդային Միության տարիներին եղել է Հայաստանի տարածքում, 1/4-ի չափով՝ իբր նրանց անասունները ջրելու պատրվակով տվել են Ադրբեջանին, բայց հիմա, ինչպես գիտեք, մեծ մասն Ադրբեջանի վերահսկողության տակ է:

04.02.2022
HRAPARAK.AM

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը

Խստագույնս դատապարտում ենք ադրբեջանական իշխանությունների՝ հատուկ հանձնաժողով ստեղծելու որոշումը, որի աշխատանքը, համաձայն պաշտոնատար անձանց հաջորդող հայտարարությունների, ուղղված կլինի Ադրբեջանի կողմից Արցախի օկուպացված տարածքներում գտնվող մշակութային և կրոնական կոթողներից հայկականության հետքերի ջնջմանը: Տվյալ քայլը ևս մեկ անգամ համոզիչ կերպով հաստատում է այն ակնհայտ փաստը, որ ադրբեջանական իշխանությունների վերահսկողության տակ հայտնված հայկական մշակութային ժառանգությանը լիակատար ոչնչացման կամ պատմական արմատներից անջատվելու իրական վտանգ է սպառնում:

Բազմիցս նշել ենք, որ Ադրբեջանի կողմից պատմության կեղծումն ու մշակութային ցեղասպանությունը տասնամյակներ շարունակ կանոնավոր կերպով իրականացվող ավելի այլևս հակահայկական քաղաքականության մաս են կազմում: Եթե ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում պատմության և մշակույթի հետ մեթեմայությունները ծառայում էին որպես արդարացում նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ից

հայկական բնակչության բռնի տեղահանման համար, ապա հիմա դրանք միտված են Ադրբեջանի կողմից Արցախի դեմ ռազմական ուժի ապօրինի կիրառման արդյունքների օրինականացմանը:

Ինչպես օկուպացված տարածքներում, այնպես էլ Ադրբեջանում հայկական ներկայության ոչնչացումը պատմության կեղծման, հայկական մշակութային կոթողների ոչնչացման և բնիկ տեղաբնակների անվանափոխման միջոցով, ըստ էության, Ադրբեջանի ագրեսիայի շարունակումն է այլ մեթոդներով:

Միջազգային հանրությունում և փորձագիտական շրջանակներում հստակ համոզմունք կա, որ մշակութային կոթողների ոչնչացումը ոտնձգություն է ժողովուրդների արժանապատվության, արժեքների և կատարելատիպերի նկատմամբ, որի նպատակն է քայքայել ազգի՝ պատմական փորձություններին դիմակայելու և զարգանալու ունակությունը: Հայկական պատմությանը և մշակույթին պատերազմ հայտարարելով՝ Ադրբեջանը հենց այդ նպատակն է հետապնդում:

Հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը ոչ միայն Արցախի ժողովրդին իր իրավունքներից, այդ թվում՝ մշակույթի իրավունքից զրկելու փորձ է, այլև՝ մարտահրավեր միջազգային հանրության համար և սպառնալիք խաղաղությանը և անվտանգությանը: Վերջին տասնամյակների ընթացքում միջազ-

Շարունակությունը էջ 8

Սյունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ...

Փետրվարի 6-ին Գորիսի Յու. Բախչյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում կայացավ «Մենք ապրում ենք այնպես, որքան մեզ հիշում են» խորագրով միջոցառում՝ նվիրված Արցախյան պատերազմի հերոսների հիշատակին, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը, Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը, 1-ին բանակային կորպուսի հրամանատար Հակոբ Ավետյանը, ԵԿՄ Գորիսի նախագահ Յենրիկ Ասրյանը, 44-օրյա պատերազմի մասնակիցներ, ազատամարտիկներ, պատանի երկրապահներ, հյուրեր:

Գորիսի գիևկրթական պալատում տեղի ունեցավ ծաղկեղոտ, որտեղ հատուկ բանակային կորպուսի ավագ գնդերեց Տեր Տրդատ Քահանա Գևորգյանն իրականացրեց հոգեփակցության արարողություն՝ նախատված գիևկրթների հիշատակին:

«Մենք ապրում ենք այնպես, որքան մեզ հիշում են» խորագրով միջոցառումը մեկնարկեց մոմավառությամբ՝ դպրոցի Արցախյան 44-օրյա պատերազմի հերոսների հիշատակը հավերժացնող անկյունում, այնուհետև մեկ րոպե լռությամբ՝ ի հարգանս Արցախյան երկրորդ պատերազմում ընկած մեր բաշտողիների հիշատակի, մեկնարկեց միջոցառում՝ Նժդեհյան պատգամը մեզ՝ սերունդներին փոխանցվող սրտառու խոսքերով:

Ամուսնու, երգ, պար, բեմադրություն. ամեն ինչ հարիր էր դաիվիճում տիրող տրամադրությանը:

«Չինվիր, երկիրը բուն է, դու՛ր երկիրը, քո անունը գրված է և հար կմա հայրենիքիս փառամատյանում», – հնչեցրին երեխաները, կոչ արեցին հայությանը բռնկեցվել, համախումբ դառնալ և վրեժվել հանուն զախիքի:

Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի կողմից Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների 44-օրյա պատերազմի մասնակից ուսանողները, ինչպես նաև պատերազմում 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ դարձած մասնա-

կիցները հուշանվերներ ստացան: Գորիսի տարածաշրջանի երկրապահների միության նախագահ Յենրիկ Ասրյանը ԵԿՄ անունից պատվոգրեր հանձնեց 44-օրյա պատերազմի մարտական գործողությունների ակտիվ մասնակիցներին:

Միջոցառումը եզրափակվեց Սյունիքի մարզպետ և ԵԿՄ Սյունիքի կառույցի նախագահ Մելիքսեթ Պողոսյանի ելույթով. նա արժևորեց ու շնչտեց երիտասարդության դերը թե՛ բանակաշինության, թե՛ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման գործում:



Յունվարի 31-ին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը մարզպետարանում ընդունել ու պարգևատրել է 2020-2021 ուստարում մարզում լավագույնը ճանաչված մանկավարժներին:

Կրթության բնագավառում և մատաղ սերնդի դաստիարակության գործում ներդրած ավանդի ու բարեխիղճ աշխատանքի համար մարզպետից շնորհակալագիր են ստացել Ռիտա Օվչյանը (Կապանի թիվ 2 ավագ դպրոց, «Պատմություն» առարկա), Հայկ Հակոբյանը (Կապանի թիվ 2 ավագ դպրոց, «Աշխարհագրություն» առարկա), Գոհարիկ Հաջաթյանը (Կապանի թիվ 6 հիմնական դպրոց, «Հայ եկեղեցու պատմություն» առարկա):

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



Սյունիքում ձմեռային զորակոչը կազմակերպվել է պատշաճ մակարդակով



Սկզբը՝ էջ 1

Թով: Նաև մեր շնորհավորանքն ենք փոխանցում այն կապակցությամբ, որ Ձեր ղեկավարած ստորաբաժանումը 2021 թվականի ուսումնական տարվա արդյունքների ամփոփմամբ արժանացել է ՀՀ զինված ուժերի «Լավագույն զինվորական կոմիսարիատ» կոչմանը և ստացել փոխանցիկ դրոշ:

– Շնորհակալ եմ շնորհավորանքների համար: Հիմա՞ զորակոչի մասին...

Չորակոչը հունվարի 31-ի դրությամբ ավարտվել է: Կարևոր մի փաստ եմ ուզում արձանագրել. մեր մարզում զորակոչից խուսափողների թիվը նվազել է, ինչն ուրախացնող է: Այս զորակոչից ունենք չորս խուսափող, ովքեր հանրապետությունից դուրս են գտնվում: Ինչպես 44-օրյա պատերազմից հետո կատարված երկու զորակոչին, այս անգամ ևս սյունեցու ոգին բարձր է, և պարտքի գիտակցումով են տղաները մեկնում բանակ, ինչը մեզ համար չի կարող ոգևորիչ հանգամանք չլինել: Իհարկե, թվեր չեն հրապարակի, միայն կնշեն, որ Սյունիքի ստորաբաժանման առջև դրված առաջադրանքը կատարվել է: Որևէ խնդիր չենք ունեցել՝ անգամ մարզի հեռավորությունը մայրաքաղաքից և ընդհան-

րապես համայնքների՝ կենտրոնից կտրվածությունը, ձմռան եղանակային պայմանները խոչընդոտ չեն եղել: Մի խոսքով՝ ձմեռային զորակոչը կազմակերպվել է բարձր մակարդակով:

– **Երբ մտա՞նք ստորաբաժանման շենք, ամփոփապես աչքի զարնեց այն, որ տարածքային բաժանմունքների պետերը նույնպես այստեղ են, ինչո՞վ է պայմանավորված:**

– Ամփոփում էինք 2021 թվականի ուսումնական տարվա արդյունքները, որին հրավիրվել են տարածքային բաժանմունքների պետերը: Նաև տեղեկացնեմ, որ մարզային ստորաբաժանման ներսում ամփոփվել են արդյունքներն ու փոխանցիկ դրոշի է արժանացել Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման Կապանի բաժանմունքը (պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ մայոր Սևակ Մանուկյան):

– **Կատակ բան չէ ստանալ ՀՀ զինված ուժերի փոխանցիկ դրոշը, ուզում ենք մեր ընթերցողին ներկայացնեք իրողությունը:**

– Ընդամենը զինկոմիսարիատի ողջ անձնակազմը բարեխղճորեն իր ծառայությունն է կատարել... Չնայած առկա բարդություններին, հիմնախնդիրներին՝ որևիցե պրոբլեմ



չենք ունեցել՝ զորահավաքի հետ կապված: Տեղյակ եք, որ հանրապետության կառավարության որոշմամբ ունեցել ենք յոթնօրյա, տասնօրյա, եռամսյա վարժահավաքներ, ունեցել ենք տեխնիկայի զորակոչ: Չորահավաքային բաժանմունքն իր առաջ դրված առաջադրանքները պատշաճ մակարդակով իրականացրել է. նկատի ունեմ և՛ զորակոչը, և՛ զորահավաքը: Մեր արածն ըստ ամենայնի ամփոփվել է վերադասի կողմից, ինչի արդյունքում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի տարածքային ստորաբաժանումը հարթող



Իրոք առողջական խնդիրներով զորակոչիկներ ունենք: Դա պայմանավորված է նրանց ապրելակերպով. երիտասարդները քիչ են զբաղվում ֆիզիկական պատրաստությամբ... Որևէ առողջական խնդիր հայտնաբերելու դեպքում նորակոչիկն ուղեգրվում է մայրաքաղաքի համապատասխան բուժհաստատություն՝ հետազոտման, և քննարկվում է նրա՝ զինծառայության պիտանի լինելու խնդիրը:

Ե ճանաչվել: Այն ինձ և ստորաբաժանման անձնակազմին պարտավորեցում է՝ ավելիին պիտի ձգտենք՝ ի շահ մեր պետության:

Դուք սկզբից ինձ շնորհավորեցիք զնդապետի զինվորական կոչման արժանանալու առթիվ: Այս համատեքստում հայտնեմ, որ ստորաբաժանման որոշ զինծառայողներ (սպաներ) նույնպես ստացել են հերթական կոչումներ՝ երկու հոգի՝ ավագ լեյտենանտի: Բաժանմունքի աշխատակից երկու բաղձառայողի՝ մասնակցելով մասնագիտական դասընթացների, շնորհվել է պահեստազորի լեյտենանտի կոչում: Ասածս այն է, որ առաջխաղացում ունեն նաև ստորաբաժանման աշխատակիցները, ինչն ուրախացնում է:

– **Ձմեռային զորակոչն արդեն պատմություն է: Ինչպես առում են՝ եկել է բարերը հավաքելու ժամանակը, այն է՝ նաև եզրահանգումներ անելու: Մեզ, մասնավորապես, հետաքրքրում է, թե առողջական ի՞նչ վիճակով են սյունեցի զինակոչիկները մեկնել զինծառայության:**

– Շատ ցավոտ հարց եք տալիս: Իրոք առողջական խնդիրներով զինակոչիկներ ունենք: Դա պայմանավորված է նրանց ապրելակերպով. երիտասարդները քիչ են զբաղվում ֆիզիկական պատրաստությամբ... Որևէ առողջական խնդիր հայտնաբերելու դեպքում նորակոչիկն ուղեգրվում է մայրաքաղաքի համապատասխան բուժհաստատություն՝ հետազոտման, և քննարկվում է նրա՝ զինծառայության պիտանի լինելու խնդիրը: Լինում են դեպքեր, երբ նորակոչիկի հիվանդության մասին նույնիսկ տեղեկություններ չեն: Չինակոչիկների շատ հիվանդություններ հայտնաբերվում են զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից:

Կուզեի, որ մեր երիտասարդները վաղ տարիքից զբաղվեն մանկական խաղերով. ընդ որում՝ նախ պիտի սկսենք մեր տներից, երեխաներին կտրենք բջջային հեռախոսներից... Մեր մանկության տարիներին տարբեր խաղեր կային, բակերում ֆուտբոլ ու վոլեյբոլ էին խաղում: Հիմա այդ ամենը, կարծեք, մոռացվել է...

– **Նախկինում որոշ ոճվարություններ կային մայրաքաղաք ուղեգրվող նորակոչիկին կացարանով, սննդով ապահովման հետ կապված՝ գումար հատկացնելու առումով: Մանավանդ նորակոչիկների ծնողները տրտնջում էին, թե հատկացված գումարը չի բավականացնում:**

– Այժմ փոխհատուցվում է ճանապարհածախսը, և եթե ուղեգրվող զինվորները տեղ չունեն, հիվանդանոցում նրան զինվորները տեղով են ապահովում: Ճանապարհածախսից սկսած՝ բոլոր հարցերը լուծված են:

– **Չինակոչիկին ուղարկում եք ծառայության, կապ ունենում եք զորամասերի հետ, լինում են դեպքեր, երբ զինակոչիկների ծնողները Ձեզ դիմեն որևէ հարցով...**

– Մենք կապող օղակ ենք զորամասի և ծնողի միջև: Ծնողները մեզ դիմում են տարբեր հարցերով՝ տիրության, ուրախության առիթներ են լինում (հարսանիք, հուղարկավորություն և այլն): Մենք պատրաստում ենք բոլոր փաստաթղթերը, անմիջապես արձագանքում, իրագեկ պահում տվյալ զորամասի հրամանատարությանը: Սա ամենը չէ. զորամասի հրամանատարությունն օրինակելի զինվորներին խրախուսում է շնորհակալական նամակներով, արտահերթ արձակուրդով, ինչը հանրայնացնում ենք: Այնպես որ՝ զորամասերի հրամանատարության հետ կապը կա:

– **Արցախյան երրորդ պատերազմից հետո մի քանի դրվագներով անդրադարձանք զորակոչին, զորահավաքին և տեսանք, որ որոշ խնդիրներ, այնուամենայնիվ, կան կցագրման հարցում:**

– Չորահավաքային կցագրումը նկատի ունեք, թե՞ զորակոչային:

– **Ե՛վ զորահավաքայինը, և՛ զորակոչայինը...**

– Պատերազմական գործողությունների ժամանակ պահեստազորի զինապարտներին ընդգրկում ենք կոնկրետ զորամասերում ըստ մասնագիտությունների: Եվ կա պատահների կցագրում, դա այն դեպքում է, երբ լրանում է նրանց 16 տարին. ներկայանում են ստորաբաժանում՝ կցագրման ձևով հաշվառումը կատարում ենք:

Փետրվարի 7-ից սկսել ենք 2006 թվականին ծնված պատանիների հաշվառումը: Եվ սույն հարցազրույցը լավ առիթ է, որպեսզի նաև Ձեր թերթի միջոցով



հասարակությունն իրագրելի, որ պատանիները ներկայանան գինվորական հաշվառման: Քանզի մեր հանձնաժողովը մանրակրկիտ ուսումնասիրում է թե՛ նրանց ընտանեկան դրությունը, թե՛ առողջական վիճակը: Պարզում ենք՝ արդյո՞ք կցագրման փուլում նրանք կարիք ունեն բուժման:

Որակյալ, ճիշտ կցագրումով և պայմանավորված գորակոչների և զորահավաքների պատշաճ անցկացումը:

Այս շաբաթվա ընթացքում կցագրման աշխատանքները (հանձնաժողովով) կսկսենք Կապանից, ապա կայցելենք Մեղրի, և այսպես՝ մարզի բոլոր տարածաշրջաններում աշխատանքները կլինեն շարունակական:

Կցագրումն իրականացվում է ողջ տարվա ընթացքում...

– Մամուլից տեղեկացանք, որ շուտով մեկնարկելու են վարժական հավաքները, որը կտևի մինչև հունիսի 1-ը:

– Դրանք շարունակական կլինեն: Արդեն սկսել ենք նախապատրաստական աշխատանքները: Կարծում եմ՝ այս անգամ ևս ստորաբաժանման անձնակազմը պատվով կկատարի իր առջև դրված առաջադրանքը: Եռամսյա վարժանքների կազմակերպումն իր բարդություններն ունի, տարբեր խնդիրների ենք բախվում: լինում են հարցեր, որոնց դեպքում օրենքը չի ազատում վարժանքներից, բայց տեսնում ենք, որ տվյալ անձնակազմի ընտանիքը վատ վիճակում է, առողջական ու սոցիալական խնդիրներ կան, գյուղատնտեսական հարցերն են խոչընդոտում, ասենք՝ մեղրեցին պիտի իր բերքը հավաքի, որ իր ապրուստի միակ միջոցն է, կամ սի-հիանցին պետք է անասնակեր կուտակի, որի համար ամբողջ տարին չարշավվել է: Ուշադիր լսում ենք բաղաձայններին, հնարավորության սահմաններում ձգտում ընդառաջել՝ հաջորդ վարժանքներին նրանց ներգրավելու պայմանով:

Հորդորում եմ բոլորին՝ ծանուցագիր ստանալու դեպքում պարտաճանաչորեն ներկայանալ տարածքային ստորաբաժանումներ: Երկրի պաշտպանությունը բոլորիս խնդիրն է:

– Լշենք, որ վարժահավաքն ունի տեխնիկական բաղադրիչ, դրանում պիտի ներգրավվի տեխնիկա՝ ավտոմեքենա, տրակտոր և այլն: Որքանով էք կարողանում այդ հարցը լուծել:

– Տեխնիկան հիմնականում ներգրավում ենք հիմնարկ-ձեռնարկություններից՝ անկախ սեփականության ձևից, անհատից միայն պատերազմի ժամանակ իրավունք ունենք վերցնելու: Այս հարցում ևս դժվարություններ կան, բանզի մեր մարզում (ներկայումս) տեխնիկան հիմնականում ներգրավված է ճանապարհաշինության մեջ, և գոնե Դուբ գիտեք, թե տարածաշրջանում բանի այլընտրանքային ճանապարհ է կառուցվում: Կասեմ, որ ցանկության դեպքում բոլոր հարցերը լուծելի են: Եթե հարցեր են ծագում, գեկուցում ենք վերադասին, որը համապատասխան որոշումներ է կայացնում:

– Ինչքան էլ փորձենք ցույց չտալ, այնուամենայնիվ, 44-օրյա պատերազմ ենք տեսել, զոհեր, վիրավորներ, գերի-

Մեր առջև ծառայած հիմնարկ-դիրները լուծելիս համագործակցում ենք տեղական ինքնակառավարման, ինչպես և իշխանության տարածքային մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ: Բոլորը գիտակցում են հարցի կարևորությունը և մեզ օժանդակում իրենց լիազորությունների սահմանում: Երախտապարտ ենք բոլորին...



ներ, անհետ կորածներ... Եթե ասենք, որ ծնողները հաճույքով, առանց տագնապի զգացումի են իրենց զավակներին բանակ ճանապարհում, բնավ էլ այդպես չէ: Ընդհանրապես սգավոր ժողովրդի շրջանում գորակոչ կազմակերպելը հերոսության պես մի բան է...

– Մեր ողջ անձնակազմը մշտապես գոհված գինվորների ընտանիքների կողքին է: Տարբեր առիթների ժամանակ բաժանվում ենք խմբերի, բանի որ Սյունիքի մարզը շատ ընդգրկում է: Այցելում ենք գոհվածների շիրմերին, ձգտում ենք, որ գոհվածների երեխաները մշտապես հոգատարությամբ շրջապատված լինեն: Կապն այդ ընտանիքների հետ միշտ կա: Այն, ինչ մեր ուժերի սահմաններում է, լուծում ենք, ինչը մեր ուժերից վեր է՝ դիմում ենք ըստ վերադասության, որ հարցերին լուծում տրվի: Իհարկե, երբեմն անհրաժեշտություն է առաջանում գրուցել նորակոչիկների ծնողների հետ, պատասխանել նրանց մտահոգող հարցերին, որոշակի խորհրդատվություն իրականացնել:

– Պարոն գնդապետ, այս գրուցի ընթացքում հարցերի որոշակի շրջանակ քննարկեցինք՝ գորակոչ, կցագրում, վարժահավաք: Սրանք հարցեր են, որ բուն ցանկության դեպքում անգամ, առանց իշխանության տարբեր օղակների հետ համագործակցության, հնարավոր չէ լուծել:

– Համակարծիք եմ Ձեզ հետ: Մեր առջև ծառայած հիմնարկ-դիրները լուծելիս համագործակցում ենք տեղական ինքնակառավարման, ինչպես և իշխանության տարածքային մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ: Բոլորը գիտակցում են հարցի կարևորությունը և մեզ օժանդակում իրենց լիազորությունների սահմանում: Երախտապարտ ենք բոլորին...

– Արդյո՞ք դժվար չէ Սյունիքի գինկոմիսարիատը գլխավորել հետպատերազմյան ոչ սովորական պայմաններում:

– Դժվարություններն ամենուրեք են. որպես պրոնեցի՝ սիրով եմ ծառայում հայրենիքիս:

ՀԱՌՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ.

«Թուրքիայի և Ադրբեջանի հեռահար նպատակը Սյունիքն է, ես դրանում չեմ կասկածում»

Սկիզբը՝ էջ 1

Հիմա՝ Հայաստանը ճանաչում է այդ պայմանագրերը, և արդյո՞ք խնդիրներ չունենք այդ փաստաթղթերի հետ:

– Այդ փաստաթղթերը, մասնավորապես Կարսի պայմանագիրը, մեր հասարակության մեջ, մեր ժողովրդի կողմից անարդարացի է ճանաչվում, որովհետև հիմնվում է 1921 թ. մարտին կնքված Մոսկվայի պայմանագրի վրա, որի կնքմանը Հայաստանի ոչ մի ներկայացուցիչ չի մասնակցել, այսինքն՝ Հայաստանի սահմանները որոշվել են անկախ մեզանից, առանց մեր ներկայության, ինչն անարդարացի էր: Եվ այդ անարդարությունը պարտադրվեց խորհրդային Հայաստանին՝ արդեն Կարսի պայմանագրով, այդ պատճառով հայ ժողովուրդն այն ճանաչում է որպես անարդարացի: Հայկական կողմից պաշտոնական ոչ մի հայտարարություն չի եղել, ուստի և կարող եմ ասել՝ Հայաստանը պաշտոնապես ճանաչել է Կարսի պայմանագիրը: Իհարկե, Հայաստանը դառնալով ՄԱԿ-ի անդամ ճանաչել է ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների սահմանները: Այնպես է, որ միջազգային կազմակերպության անդամ դառնալով՝ դու ճանաչում ես այդ կազմակերպության անդամ երկրների սահմանները, բայց կոնկրետ Կարսի պայմանագրի վերաբերյալ Հայաստանը ոչ մի հայտարարություն չի արել:

– Մեկ անդրադարձ ևս պատմությանը՝ Սևրի հաշտության պայմանագրին՝ 1920-ի օգոստոսին ստորագրված: Դրանով, թղթի վրա, հաստատվեցին հայ ժողովրդի պահանջներն ու իրավունքներն Արևմտյան Հայաստանում:

Լոզանի 1923-ի պայմանագրով Սևրի հաշտության պայմանագիրը չեղյալ հայտարարվեց:

Հայաստանը և, իհարկե, այդ պայմանագրի կողմ երկրներն ի՞նչ դիրքորոշում ունեն Սևրի հաշտության ու Լոզանի պայմանագրի հանդեպ:

– Սևրի պայմանագիրը, իհարկե, մեր ժողովրդի դարավոր ձգտումների իրականացումն էր՝ որոշ չափով: Ցամուք սրտի, այդ պայմանագիրը չվավերացվեց, օրենքի ուժ չստացավ: Բայց Սևրի պայմանագրի ստորագրումից հետո եղավ Վիլսոնի իրավարար որոշումը, որի հիման վրա որոշվեց Հայաստանի ու Թուրքիայի սահմանը, որը մենք ընդունում ենք: Լ՝ պատմագիտական միտքը, և՛ տարբեր բաղաձայնական կուսակցություններ, տարբեր բաղաձայնական շրջանակներ: Սևրի պայմանագիրը պատմական փաստ է, որն ուժի մեջ չմտավ, բայց շատ կարևոր հանգամանակ է մեզ համար: Մյուս կողմից՝ Լոզանի պայմանագրով փաստորեն հայկական հարցը փակվեց, որովհետև դրա մեջ ոչ մի խոսք չկա Հայաստանի մասին: Մինչև Լոզանի պայմանագրի կնքումը խոսակցություններ էին շրջանառվում, թե այդ պայմանագրում պիտի արտահայտվի հայկական հարցը, բայց ի վերջո թուրքական պատվիրակությունը, որ ղեկավարում էր Իսմեթ Ինյունուն, ով հետագայում դարձավ Թուրքիայի երկրորդ նախագահը, հասավ այն բանին, որ դուրս հանվեց, այսինքն՝ կարելի է ասել, որ 1921 թվականից սկսած՝ Թուրքիայի ջանքերի շնորհիվ, Մոսկվայի և Կարսի պայմանագրերից հետո հայկական հարցը դուրս մղվեց միջազգային թատերաբեմից: Լոզանի պայմանագրի շուրջ, շատ հետաքրքիր կերպով, Թուրքիայում սկսում են ծայրեր հնչել ներկայումս, թե պիտի վերանայվի Լոզանի պայմանագիրը, որովհետև դա անարդարացի է, այսինքն՝ հենց Թուրքիայում են բարձրացնում այդ խնդիրը, նույնիսկ Երդողանն է դրան անդրադարձել: Ինչո՞ր, որովհետև Լոզանի պայմանագրով ամրագրվեցին Թուրքիայի այն սահմանները, որոնք որոշ չափով չեն համապատասխանում Ազգային ուխտի սահմաններին, որ ընդունվել էր 1920 թվականին Օսմանյան խորհրդարանի կողմից: Եվ հիմա Թուրքիայում ծայրեր են հնչում, թե դրանից պիտի ազատվել ու վերականգնել Ազգային ուխտի սահմանները: Այնպես որ՝ Լոզանի պայմանագրի վերականգնումն անհրաժեշտ է մեզ համար, չնայած Թուրքիայի համաձայնագրի, որով հիմա սկսվել են, ու եթե զարգանան՝ կհանգեցնեն մի իրավիճակի, որ անհրաժեշտություն կառաջանա նորից անդրադառնալ Սևրի պայմանագրին՝ իբրև նախադեպ, և նոր պայմաններում մի նոր պայմանագիր կկնքվի Մերձավոր Արևելքի վերաբերյալ: Սա առաջին:

Երկրորդ՝ մենք տեսնում ենք, որ մի բանի տասնյակ միլիոնանոց բուրդ ժողովուրդը չունի իր պետականությունը, և համոզված եմ պատմական օրինաչափությունն այնպիսին է, որ վաղ թե ուշ պիտի ստեղծվի բորդական պետականություն՝ Մերձավոր Արևելքի երկրներից մեկի կամ մի քանիսի տարածքի վրա: Կգա այդ ժամանակը: Եվ երբ սկսվի բորդական պետականության ձևավորման գործընթացը, խոշոր տերությունները, որոնք կփորձեն այդ գործընթացը կառավարել, ուզած-չուզած պիտի անդրադառնան Սևրի պայմանագրին: Ինչո՞ր, որովհետև Սևրի պայմանագիրը միակ միջազգային փաստաթուղթն է, որ ստորագրվել է այն երկրների կողմից, որտեղ խոսվում է բորդական պետության մասին: Սևրի պայմանագրով բուրդ ժողովրդին իրավունք է վերապահվում ստեղծել իր անկախ պետականությունը: Սևրի պայմանագիրը բորդական պետականության ստեղծման դեպքում էլ հանդիսանալու է որպես նախադեպ, որի հիման վրա պիտի որոշվեն բորդական նոր պետության սահմանները: Ուստի՝ Սևրի պայմանագիրը, լինելով պատմական փաստ, այս վերջին աշխարհաբաղաձայնական զարգացումների պայմաններում որոշակի արդիականություն կարող է ձեռք բերել, որին ուզած-չուզած պիտի անդրադառնալ: Ո՛ր այս պայմաններում, համոզված եմ, Հայաստանը պիտի պատրաստ լինի, որպեսզի կարողանանք որոշակի ձեռքբերումներ ունենալ:

– Եվ, այդ բոլորով հանդերձ, Հայաստանը գնում է Թուրքիայի հետ հաշտության...Ըստ Ձեզ՝ Թուրքիան ի՞նչ ակնկալիքներ կարող է ունենալ մեկնարկած բանակցություններից:

Որքան էլ ասենք՝ առանց նախապայմանների են բանակցությունները լինելու, իրականում այնքան էլ այդպես չէ, Թուրքիան դեռևս 1990-ականներից նախապայմաններ է մեզ առաջադրում: Իսկ վերջին օրերին Հայաստանի հետ հարաբերությունները Թուրքիան քննարկման շարունակությունը՝ էջ 7



Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց բազորդիներին



Արամ Պավայան. հիանալի մարդ ու հայրենասեր

Արամ Հրաչիկի Պավայան. ծնվել է 1973թ. փետրվարի 6-ին, Քաջարան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: 1989-1994 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետում՝ ստանալով ինժեներ-մեխանիկի մասնագիտություն: Այդուհետև աշխատել է ընկերությունում գերազանց առաջադիմությամբ՝ արժանանալով լավագույն ուսանողի տիտղոսին: Ինստիտուտն ավարտելուց հետո զորակոչվել է Ազգային բանակ, ծառայել որպես սպա (1994-1996թթ.): Լինելով հրետանավոր՝ մասնակցել է 90-ականների Արցախյան պատերազմին և զորացրվել լեյտենանտի կոչումով:

1997 թ. աշխատանքի է ընդունվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Կարճ ժամանակ անց դարձել է արտադրամասի ճարտարագետ: 2009-2013 թթ. աշխատում էր ԶՊՄԿ-ի կապիտալ շինարարության բաժնում՝ ինժեներ-մեխանիկ՝ համատեղելով նոր տեխնոլոգիաների համակարգողի պաշտոնը, 2013-2018 թվականներին՝ ԶՊՄԿ-ի արտադրական բաժնի գլխավոր մասնագետն էր, իսկ 2018 թվականից նա է վստահվել այդ ընկերության գլխավոր մեխանիկի տեղակալի պաշտոնը:

Արամի մասին ընկերները պատմում են՝ «Կարելի է ասել, որ խոսքը խոսք է պատմել նրա մարդկային հատկությունների, նրա մարդ տեսակի ու տիեզերական ոգու մասին: Արամն օժտված էր մարդկային վեհ գաղափարներով և բնավորության այնպիսի վեհանձն գծերով, որոնք են՝ մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը, բարությունը, կարեկցանքը: Ուրախությամբ առիթների կարողանում էր լիաթոք ուրախանալ, իսկ որևէ մեկի անհաջողությունը կամ տխրությունն ընդունում էր որպես անձնական ցավ: Անձնվիրաբար, անշահախնդիր նվիրվում էր ընկերներին, շատ ընկերասեր էր և յուրաքանչյուրի հետ ուներ իր առանձնահատուկ շփման ձևը: Արամը շատ մեծ հարգանք էր վայելում մարդկանց մեջ, քանի որ նրան շատ սիրում ու գնահատում էին թե՛ իրենցից հասակով փոքրերը, թե՛ մեծահասակները՝ նրան համարելով եզակի կերպար մեր հասարակությունում: Նույնիսկ կարճ ժամանակում առնչված մարդիկ հասցրել էին ընկալել նրա մարդ տեսակը և շատ մեծ ավստանք էին հայտնում եղելության առիթով, կշռելով, որ Պավայան իր խորհուրդներով, մարդկային որակներով ու մասնագիտական լուրջ կարողություններով թե ու թիվունք կլինեք մեր սերունդների: Ափսոս, հազար ափսոս, որ մեր իրականությունից հեռանում են նման մարդիկ...»:

Արամ Պավայանը պատերազմի առաջին օրվանից, որպես պահեստագործի սպա, դասակի հրամանատարի կարգավիճակով մեկնել էր ռազմաճակատ, սկզբից՝ Սյունիքի սահմաններ, հետո՝ Արցախ:

Քաջաբար զոհվել է մարտական գործողությունների ընթացքում հոկտեմբերի 17-ի գիշերը:

Հայաստանի Հանրապետության և Իսրայելի հրամանագրով հետմահու պարգ-

ևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով: Արամ Պավայանը հուղարկավորվել է Քաջարանի գոհված ազատամարտիկների հուշահամալիրում: //



Նարեկ Սարգսյան. 26-ամյա պայմանագրայինը

Նարեկ Ջիվանի Սարգսյան. ծնվել է 1993-ին, Սիսիան քաղաքում: Ընտանիքի կրտսեր որդին էր: Ավարտելով Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոցը՝ զորակոչվել էր բանակ, իսկ զորացրվելուց հետո ծառայությունը շարունակում էր հայոց բանակում Սիսիանի զորամասում պայմանագրային զինծառայող:

Նարեկի մայրը՝ տիկին Լուսինա, պատմում է, որ որդին շատ էր սիրում զինվորականի ծառայությունը, և ամենայն պատասխանատվությամբ էր կատարում իր առջև դրված մարտական առաջադրանքները:

«Նարեկ Սիսիանի գնդում էր աշխատում, սիրով էր գնում իր գործին, մայիսի 6-ին կյրանար վեց տարին, որ այդտեղ ծառայում է... 2020 թ. մայիսից դիրքերում էր, մի քանի անգամ էր տուն եկել: Սեպտեմբերի 27-ին էլ երկու օրով դիրքերից իջավ, որ մասնակցեր քեռու տղայի հոգեհանգստի և հուղարկավորության արարողություններին. նա էլ պատերազմի առաջին զոհերից էր: Մեկ այդ ժամանակ ենթադրվում էր, որ Նարեկի տեսել, մեկ էլ հոկտեմբերի 8-ի գիշերը, ժամը 2-ին: Եկավ տուն, ասաց՝ մեզ տանում են Արցախ. հաջորդ օրը՝ գիշերը, Հարդրություն զոհվել է: Վերջին անգամ իր հետ խոսել ենք հոկտեմբերի 8-ին...», - պատմեց Նարեկի մայրը:

«Նարեկը գիտակցված էր գնացել ռազմաճակատ. մեր ընկերներից մեկը, որ էլի այնտեղ է եղել ու ավելի ուշ վերադարձել է, պատմում է, թե Նարեկի վերջին խոսքերը եղել են՝ հանուն հայրենիքի պատրաստ ենք մեռնելու: Մտածել է, որ կարող է հետ չգա, ու գնացել է: Հիշում եմ Արցախ մեկնելուց առաջ 2 ժամ ազատ ժամանակ ենք ունեցել, Սիսիանի գործարան էլ իրենց տանը շատ մոտ է, ասել է՝ իջնեմ տուն, երեխուս տեսնեմ, նոր գնամ, ոնց որ սիրոյդ վկայեք...», - պատմեց զոհված զինծառայողի ընկերը:

Նարեկը 2017 թվականի դեկտեմբերին էր ամուսնացել, ունի 2 տարեկան դուստր: Լպատակներ շատ ուներ, սակայն կիսատ մնացին...

«Ամսի 8-ին Սիսիանի դիրքերից իջնելուց զանգել ասել էր, որ տանելու են Արցախ, դե, քանի որ գործարանը մեր տանը մոտ է, վազելով եկել էր տուն: Ասել էր՝ երեխուն չքնացնեք, որ գամ տեսնեմ, բայց մինչև եկավ, երեխուն քնած էր: Մի քանի ժամ մնաց, ինչ-որ բան զգալով՝ իրեն անընդհատ պահեցի տանը, մինչև որ գործարանից կանգեմ, կզնար: Շատ անհանգիստ էր, երբ խոսում էիք, չէր պատկերացնում, թե ուր պետք է գնար: Ինչ պատերազմ է, ասում էր՝ Տաթև, հաստատ չեմ գործի. այդ խոսքերն ինձ ուժ էին տալիս մտածելու, որ ոչինչ չի լինի: Մինչև ժամը 3-ը մնաց տանը, մինչև զանգեցին ու ասացին՝ մեքենաները շարժվում են: Երեխան քնած էր, երկար նայեց ու գնաց...»:

Նարեկի զոհվելու մասին հարազատներն իմացել են դեպքից 3-4 օր անց, սակայն դրա-

կից մի քանի ժամ հետո ռազմական ոստիկանությունից կապ են հաստատել նրա հարազատների հետ և հերքել լուրը:

«Հոկտեմբերի 13-14-ն էր, իմացանք, որ Նարեկը զոհվել է, մարմինը բերում են, հետո զանգել էին իրենց տուն, ասել՝ հազար ներողություն, ձեր տղան Ստեփանակերտի ռազմականում է, ողջ է: Հաջորդ օրն իմացանք, որ դա էլ է սխալ, մահացել է, ուղղակի դին չեն ճարում: Այսինքն՝ մի անգամ իմացանք, որ մահացել է, դին արդեն բերում են. տանն այնպիսի վիճակ էր... Մի քանի ժամ հետո ասացին՝ կներեք, սխալվել ենք, ողջ է ձեր տղան, հաջորդ օրն առավոտյան իմանում ենք, որ իրոք մահացել է, ուղղակի դին չեն ճարում: Հոկտեմբերի 27-ին նոր մարմինը բերեցին», - պատմեց Նարեկի ընկերը՝ Արմենը:

Տաթևը ևս շեշտեց, որ ամուսնու մասին գուցե լսելուց հետո սկսել են փնտրել նրան, հետո 17 օր սպասել են՝ մինչև կստանալին ԴԼԹ-ի համընկնման պատասխանը:

«Մեզ ասացին, որ դին երեք օր հետո են գտել, բայց ես իմ աչքով չտեսա, չկարողացա հրաժեշտ տալ նույնիսկ...»:

Նարեկ Սարգսյանի հուղարկավորությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 28-ին՝ Սիսիանի զինվորական պանթեոնում:

ՆԱՐԵԿ ԽԱՉՍՏՐՅԱՆ



Հրահատ Կարապետյան. ընկերներին մենակ չթողեց...

Հրահատ Փայլակի Կարապետյան. ծնվել է 1983թ. դեկտեմբերի 2-ին, Սիսիան քաղաքում: Տեղի թիվ 2 դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է ԴՕՍԱՄՏ-ի դասընթացներում: Այնուհետև՝ 2001թ. զորակոչվել է հայոց բանակ՝ ծառայել Էրզնամիսում:

Չորացրվելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Շաքիի քաղաքի արտադրամասում: Սոցիալական խնդիրների պատճառով մեկնել է ՌԴ, երկու տարի այնտեղ աշխատելուց հետո վերադարձել հայրենիք: Գտնում էր, որ օտար հողում մարդ մնում է օտար, հայրենիքն է մարդուն ուժ տվողը:

Ամուսնացել է Հասմիկ Կարապետյանի հետ և ունեցել երեք զավակ:

Հասմիկի ու Հրահատի ընտանիքը հարևաններն օրինակելի են բնորոշում «Ափսոս, Հրոն լավ տղա էր, երեխաների համար շատ ենք տխրում՝ հորը շատ էին սիրում, կինն էլ նրան շատ էր նվիրված. դաժան է պատերազմը, շատ-շատ տներ քանդեց, երանի խաղաղությունը հարատև լինի...»:

2013 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ընթացքում հազար ու մի դժվարություն է տեսել, բայց երբեք չի բողոքել ծառայությունից, համարում էր, որ դժվարությունը տղամարդու համար է, միայն ընտանիքի անդամների համար էր անհանգստանում...

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց... Սիսիանի զորամասի ծառայողները խուճ-խուճ մեկնում էին Արցախ՝ Սյունիքի դարպասն ու իրենց տունը պաշտպանելու:

Հոկտեմբերի 10-ին Արցախ մեկնող մեքենաներից մեկում էր Հրահատը: Ընկերների պատմելով՝ հրամանատարը դիրքում Հրոյին

ասել է, թե կարող է Արցախ չգալ, քանի որ երեք երեխա ունի, բայց նա հակադարձել է. «Ձեզ մենակ չեմ կարող թողնի...»:

Մեքենան, որում գտնվում էր Հրահատը, առաջնագիծ չհասավ. Կարմիր Շուկայի մոտակայքում թշնամու անօդաչուի հարվածից պայթում է՝ զոհվում է Հրահատը՝ կնոջն ու երեք երեխային թողնելով իրեն հավերժ կարողություն գալիս ու հերոսացած հայի ընտանիք լինելու հպարտությունը:

ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Մայրը Էդգար Մաթևոսյան՝ խիզախ, անվախ զինվորական

Էդգար Մաթևոսյան. ծնվել է 1984թ. հունիսի 7-ին, Կապան քաղաքում: Մեծացել էր առանց հոր, մոր՝ Արմինե Գևորգյանի հովանու ներքո: Էդգարը մանկությունից օջախի իսկական տղամարդն ու տերն էր: Ավարտեց Կապանի համալսելի Սյունիքի միջնակարգ դպրոցը: Հրաշալի աշակերտ էր և կարող էր ընտրել ցանկացած մասնագիտություն, բայց գերադասեց բանակը և ընդունվեց Կազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն ու գերազանցությամբ ավարտեց այն:

Էդգար Մաթևոսյանը նշանակվեց Արցախի պաշտպանության բանակի վաշտի հրամանատար, այնուհետև՝ գումարտակի շտաբի պետ՝ Սանասարում: Իրեն լիովին նվիրել էր բանակին ու հայրենիքի պաշտպանությանը: Երբ սկսվեց 2016թ. ապրիլյան պատերազմը, մայրը Էդգար Մաթևոսյանը թշնամուն դիմավորեց առաջնագծում: Գիտեր՝ պետք է մարտնչել: Նրա զինվորները հաղթեցին մարտերում և կորուստներ չունեցան: «Մարտական ծառայություն» մեդալով գնահատվեց խիզախ հրամանատարի սխրանքը:

2020թ. սեպտեմբերի վերջին մայրը Մաթևոսյանի գումարտակը տեղակայվեց Ջրակա-նում (Տաթրայիում): Հինգ օր գումարտակը մարտնչում էր բարձունքի վրա՝ հետ մղելով հակառակորդի գրոհները: Հոկտեմբերի 2-ին գումարտակի դիրքեր գնամթերք բերեցին: Նա օգնում էր բեռնաթափելու մեքենաները. այդ ժամանակ էլ սկսվեց թշնամու օդուժի հարձակումը: Ծանր վիրավորվեց, բայց առաջվա պես ոգին բարձր էր: Սկսվեց երկրորդ հարձակումը, և թշնամու հրթիռը խլեց նրա կյանքը:

Մայրը Էդգար Մաթևոսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով և «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» երկրորդ աստիճանի մեդալով:

Բանակում Էդգար Մաթևոսյանը հանդիպեց իր սիրուն՝ Ասթինե Հովակիմյանին, ով ենթասպա էր նույն զորամասում: Նրանք ամուսնացան և հրաշալի ընտանիք կազմեցին: Իրենց երկու զավակին՝ Գոռին և Արիսին, Էդգարն իր նման հայրենասեր դաստիարակեց:

Մայրը Էդգար Մաթևոսյան... Բնածին սպա... Խիզախ, անվախ մարտիկ...

Էդգար Մաթևոսյանը հուղարկավորվել է Գորիսի քաղաքային պանթեոնում: //

ԷԶԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐԻ ԱՎԱՍԱՐԳՅԱՆԸ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ. «Թուրքիայի և Ադրբեջանի հեռահար նպատակը Սյունիքն է, ես դրանում չեմ կասկածում»

Սկզբը՝ էջ 5

առարկա է դարձրել կառավարությունում և երկրի անվտանգության խորհրդում:

– Թուրքիայի նպատակը և ակնկալիքները շատ պարզ են, որոնք արտահայտել է Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուն՝ հետևյալ կերպ. մենք ուզում ենք Հայաստանի հետ մեր հարաբերությունները լիովին կարգավորել: Այս դիվանագիտական ձևակերպման մեջ արտահայտվում է նրանց ողջ նպատակը, Հայաստանին վերաբերող հարցերի համալիրը կարգավորման գործընթացի մեջ լուծելու ձգտումը, այն է՝ հարցերը կարգավորել իրենց ուզած, նախընտրած ձևով, այսինքն՝ Ձեր նշած նախապայմանները կրկնել քանակացային սեղանին՝ որոշակի փուլերով: Պարտադիր չէ, որ միանգամից դրվեն, այսինքն՝ թուրքական կողմը պիտի ձգտի, որ Հայաստանը հրաժարվի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից, Արցախին պաշտպանելու քաղաքականությունից, Հայաստանը հատուկ հայտարարությամբ հանդես գա, որ վերահաստատում է Կարսի պայմանագիրը: Այս ամենին ավելացել է՝ այսպես կոչված Չանգեզուրի միջանցքի խնդիրը: Համոզված եմ՝ բոլոր այդ հարցերը կորվեն բանակցային սեղանին, և հույս ունեմ, որ հայկական կողմը՝ գիտակցելով, որ այդ հարցերում գիշտման գնալն անընդունելի է, որոշ կարմիր գծեր կրկնի իր առջև, թուրքական պահանջները չեն կատարի կամ ճշգրտներին չի ենթարկվի:

– Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունենք մենք և ի՞նչ խնդիր կարող ենք լուծել՝ հաշվի առնելով ստեղծված մթնոլորտը:

– Երբ Թուրքիայի կողմից առաջարկներ եղան՝ բանակցությունների հետ կապված, հայկական կողմը, նաև աշխարհի ազդեցիկ պետությունների կողմից դրական արձագանքներ եղան: Ամերիկյան լրատվամիջոցներից մեկը (Բլումբերգ) հայտարարեց, որ Բայդենի հորդորանքով է Երդողանը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցը բարձրացնում, այսինքն՝ այնպիսի իրադրություն է ստեղծվել, որ թե՛ հայկական կողմը հրաժարվի թուրքական առաջարկից, միջազգային թատերաբեմում մեր մեկուսացումն ավելի կուժեղանա: Տեսանք, որ 44-օրյա պատերազմի ժամանակ մենք, ըստ եության, մեկուսացած էինք աշխարհում, ոչ մեկը մեզ լուրջ օգնություն չույժ չույժ, բացի Ռուսաստանից՝ որոշ չափով: Եղան հայտարարություններ Արևմուտքից, որոնք լուրջ ազդեցություն չունեցան: Այժմ, երբ հրաժարվեք բանակցություններից, թուրքական դիվանագիտությունը կներկայացնի, թե իրենք ձեռք են մեկնում Հայաստանին, իսկ Հայաստանը դրանից հրաժարվում է, և վերը նշած մեկուսացումն ավելի կուժեղանա: Այդ պատճառով հայկական կողմը պետք է գնա բանակցությունների՝ իհարկե շատ լավ պատկերացնելով այն կարմիր գծերը, որոնք չի կարելի անցնել:

– Հայ ժողովրդի համար (հայ-թուրքական հարաբերություններում) հարցերի հարցը, անտարակույս, Հայոց մեծ եղեռնի հանդեպ Թուրքիայի վերաբերմունքն է, միևնույն, հարյուր և ավելի տարիների ընթացքում Թուրքիան զոչմանը միտված որևէ բայլ չի կատարել:

Ըստ Ձեզ՝ Տեղասպանության թեման ի՞նչ տեղ կարող է զբաղեցնել հաշտեցման գործընթացում:

Հնարավոր համարում եք հայոց ավանդական դիրքորոշման փոփոխություն, ինչի մասին վերջերս հաճախակի ենք լսում հանրային-քաղաքական ամենատարբեր հարթակներից:

– Մինչև հիմա եղել են հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու երեք փորձ՝ դեռևս 1990-ական թվականների սկզբներից՝ երեք նախագահների՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Զոհրաբյանի, Սերժ

Սևրի պայմանագիրը պատմական փաստ է, որն ուժի մեջ չմտավ, բայց շատ կարևոր հանգամանք է մեզ համար: Սյունյա կողմից՝ Լոզանի պայմանագրով փաստորեն հայկական հարցը փակվեց, որովհետև դրա մեջ ոչ մի խոսք չկա Հայաստանի մասին:

Սարգսյանի օրոք: Ներկա բանակցային գործընթացը, որ մեկնարկել է, ունի մի առանձնահատկություն, որ նախորդները չեն ունեցել: Դա այն է, որ աշխարհի երեք խոշոր պետությունները, որոնք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողներ են՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան, ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Նախորդ երեք փորձերի ժամանակ այդպես չի եղել, այսինքն՝ հիմա աննախադեպ իրավիճակ է ստեղծվել, և, կարծում եմ, Հայաստանի դիվանագիտությունը պիտի փորձի հանգամանքն օգտագործել: Այսինքն՝ թուրքական կողմի ժխտողականությանը, Հայոց ցեղասպանության մասին կեղծիքներին պիտի հակադրել ճշուն մայր երեք պետության կողմից: Ես այսպես եմ պատկերացնում, որ այդ, Հայաստանը պիտի գնա Թուրքիայի հետ բանակցությունների՝ բազ գիտակցելով, թե Թուրքիայի համար ամենակարևորը ցեղասպանության խնդիրն է և ամեն կերպ պիտի ճշուն գործադրի, որ մենք դրանից հրաժարվենք: Նաև այն համոզմունքն ունեմ, որ Թուրքիայի հետ մեր հարաբերություններում պետք է ունենանք ուժեղ դաշնակիցներ. Ռուսաստանը մեր ռազմաքաղաքական դաշնակիցն է՝ որոշակի աստիճանահատկություններով, բայց պիտի ձգտենք, որ գոնե ցեղասպանության ճանաչման հարցում որպես դաշնակիցներ ունենանք նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներին և Ֆրանսիային:

– Մեզ՝ սյունեցիներին, շատ է հետաքրքրում այսպես կոչված Չանգեզուրի միջանցքի շուրջ թուրք-ադրբեջանական նկրտումը, որը, կարելի է ասել, նախապայմանի պես է հնչում...

Անկեղծ լինե՞ք՝ այստեղ տասնյակ հազարավոր մարդիկ չեն պատկերացնում Սյունիքի տարածքով միջանցք Թուրքիայի և Ադրբեջանի միջև (Նախիջևանի տարածքով), առավել ևս՝ եթե այդ միջանցքը մեր ինքնիշխանության ներքո չգտնվի:

– Շատ ճիշտ եք նկատում. այդ, այդ միջանցքը ասվածը ոչ միայն կոմունիկացիաներ են, այլ, ըստ եության, ինչը վկայում են փաստերը, խոսքը գնում է ընդհանրապես Սյունիքի մասին, որ Սյունիքը մաս կազմի Ադրբեջանին ու Թուրքիային, և դրանով իսկ ապահովվի ոչ միայն կոմունիկացիոն կապը Նախիջևանի ու արևմտյան Ադրբեջանի միջև, այլ նաև հող նախապատրաստի ընդհանրապես պանթուրքիստական ծրագրերի իրականացման համար: Մենք դա շատ լավ ենք հասկանում, այս դեպքում կարևոր է, որ գիտակցենք հակառակորդի ստրատեգիական նպատակները, բանգի նրա հեռահար նպատակը Սյունիքն է, ես դրանում չեմ կասկածում:

– Հայ-թուրքական կամ հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին խոսելիս, նաև այս պահին, մենք վկայակոչում ենք տարբեր պայմանագրեր, բայց...

Մի կարևոր հարց, կարծե՞ք, այդպես էլ առաջնայություն չի ստանում, նկատի ունենք վստահությունը: Մեզ հայրենազրկել են Արևմտյան Հայաստանում ու կոտորածի ենթարկել... Մեր ժողովուրդը Շուշիի, ապա Սումգայիթի և նման այլ կոտորածներ է տեսել... Մենք 2020 թ. աշնան Ադրբեջանից պատերազմ ստացանք՝ Թուրքիայի ակտիվ մասնակցությամբ, միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ...

Պատերազմից հետո էլ՝ Սյունիքի որոշ հատվածների օկուպացիա: Եվ ոչ մի զոչում Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից, ոչ մի դատապարտում, իրական խաղաղությանը միտված ոչ մի բայլ:

Մեր գրական մեծերն են քանիցս ձևակերպել՝ «Թուրքը մնում է թուրք»...

Նման իրավիճակում խաղաղության դարաշրջան բացելու մասին խոսակցությունն իսկապե՞ս լուրջ է, արդյո՞ք նորից չենք խաբվում: Արդյո՞ք այս անվստահությունը կարելի է հռչակագրերով վերացնել:

– Իհարկե ոչ, այդ անվստահությունը մենք տեսնում ենք, նաև այն, որ թշնամական վերաբերմունք կա հայ ժողովրդի նկատմամբ, Հայաստանի նկատմամբ, Արցախի նկատմամբ, Սյունիքի նկատմամբ՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից: Այս պայմաններում հայտարարություններով չի վերանա ոչ մի բան: Մենք պետք է տեսնենք ոչ թե Ադրբեջանի և Թուրքիայի զոչյալ գործընթացը, այլ նրանց կոնկրետ քայլերը, որոնք վստահություն կներշնչեն, որ խաղաղության մասին իրենց հայտարարություններն իրական են: Ժամանակ առ ժամանակ այդ հայտարարությունները՝ մասնավոր Թուրքիայից, շատ են հնչում, դրանք իսկապես ինչ-որ հիմք ունեն, և այդ համատեքստում ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից կարևոր նախապայման է: Մենք դրանով կհամոզվենք, որ ժամանակակից Թուրքիան չի կրկնելու Օսմանյան կայսրության քաղաքականությունը, և հայ ժողովրդին նորից չեն ենթարկելու ցեղասպանության: Այ դա կլինեք անվտանգության երաշխիք:

– Վերջին երեք հարյուր տարում, կարելի է ասել, հայ-թուրքական խնդիրներն առանց Ռուսաստանի (գրեթե) չեն հանգուցալուծվել: Հիմա, կարծե՞ք, հասկանալի չէ Ռուսաստանի դիրքորոշումը հայ-թուրքական՝ այսպես կոչված հաշտեցման գործընթացի հանդեպ:

Որոշ ծայրահեղականներ էլ (մեզանում), օգտվելով առիթից, ռուսական 102-րդ ռազմաբազան Հայաստանից դուրս բերելու ցնորական առաջարկներ են հնչեցնում: Ո՞ր են գնում այսպես... Արդյո՞ք ողջամիտ է ճանապարհն առանց Ռուսաստանի:

– Կարծում եմ՝ այդ ճանապարհով չենք գնում, որովհետև պատմական փորձն է ցույց տալիս, ինչպես արդեն նշեցի, մենք Թուրքիայի հետ (Ադրբեջանն էլ դրա կողքին) հարաբերվել առանց դաշնակիցի չենք կարող: Պիտի ունենանք մեկ կամ մի քանի հզոր ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական դաշնակից, և առաջինը Ռուսաստանն է: Սա աքսիոմն է: Եթե մի պահ պատկերացնենք, որ Ռուսաստանի ռազմաբազան դուրս է բերվում Հայաստանից կամ ռուս խաղաղապահներն են գնում Դարբաբից, պարզ է՝ ինչ կլինի դրա հետևանքը: Այս առումով Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատումը, բանակցային գործընթացը կարմիր գծերի վրա պիտի հիմնվեն, չպետք է ոչ մի բան գիշենք, այսպես կոչված կոչված իրաժարվում ենք մեր ինքնության մի մասից: Եվ, իհարկե, Ռուսաստանի հետ պետք է լինենք դաշնակից: Պատահական չէ՝ Թուրքիան հարց է բարձրացնում, որ այսուհետև բանակցությունները տեղի ունենան ոչ թե Մոսկվայում, այլ Անկարայում, որպեսզի այդ դեպքում Ռուսաստանը ոչ մի դեր չունենա:

– Հայ հանրության մեջ տարածված տեսակետ կա, թե իբր թուրքական գործակալական ցանցն է այսօր Հայաստանում որոշում հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների միտումները: Այդ մասին պարբերաբար բարձրաձայնվում է նույնիսկ մեր խորհրդարանի ամբիոնից:

Ձեր դիրքորոշումը կուզե՞նայինք իմանալ. թեև հարցը հատկապես առնչվում է ազգային անվտանգության մարմիններին և ոչ թե մեր գիտական հանրությանը:

Նը:

– Դա ինձ համար դժվար հարց չէ, հեշտ հարց է, քանի որ մեր ներքին անվտանգային համակարգը՝ ազգային անվտանգության ծառայությունը, չի բացահայտել թուրքական կամ ադրբեջանական գործակալական ցանց, ուստի պիտի ելնենք այն տրամաբանությունից, որ դա գոյություն չունի: Մնացյալը քաղաքական հայտարարություններ են, իսկ ես քաղաքական գործունեությամբ չեմ զբաղվում: Փաստերի վրա ենք հիմնվում՝ մեր ազգային անվտանգության ծառայությունը նման հայտարարություն չի արել...

– Որևէ հարցով արտաքին քաղաքական սկզբունքներ մշակելիս, Ձեր կարծիքով, որբանով է կարևոր հանրության տեսակետը, սովյալ ոլորտի գիտական մտավորականության դիրքորոշումը:

Այս դեպքում, օրինակ, հաշվի առնվո՞ւմ են թուրքագետների կարծիքը, մեր ժողովրդի, նաև Սփյուռքի տրամադրությունները:

Երբ վարչապետը հայտարարում է, թե Հայաստանի Հանրապետությունը երբեք Հայ դատի քաղաքականություն չի վարել՝ որբանով է դա արժանահավատ ու գիտական, մի՞թե Հայ դատը Սփյուռքի մենաշնորհն է եղել ու կա:

– Նախ՝ կուզե՞ի նշել՝ որպես թուրքագետ ներգրավված չեմ այդ գործընթացներում: Ըստ իս՝ իմ գործընկերներից ոչ մեկն էլ ներգրավված չէ: Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետությունն ըստ Սահմանադրության վարում է ցեղասպանության ճանաչման ու դատապարտման քաղաքականություն: Դա Հայ դատի կարևոր հատվածն է: Հայաստանի երրորդ հանրապետությունը Թուրքիային տարածքային պահանջներ չի ներկայացրել, որովհետև դա պետական քաղաքականություն կլինեք և դա պետական մակարդակով չի ընդունվել: Բայց կրկնում եմ՝ ցեղասպանության ճանաչման քաղաքականությունը մեր պետության օրակարգային հարցն է, որը հիմնվում է Սահմանադրության վրա: Այնպես որ՝ այս առումով Հայաստանի Հանրապետությունը նաև վարում է Հայ դատի կամ Հայկական հարցի մի կարևոր հատվածի վրա հիմնված արտաքին քաղաքականություն:

Սփյուռքի պարագան այլ է: Սփյուռքը, որ ինքը հիմնականում հենց ծնունդ է հայոց ցեղասպանության, պարզ է, որ ոչ միայն ցեղասպանության ճանաչման ու դատապարտման քաղաքականություն վարի և ձգտի դրան, այլ նաև մեր կորցրած հայրենիքի զգալի մասի հայաթափման ու Արևմտյան Հայաստանի ցեղասպանության արդյունքում վերջնականորեն հայաթափված հայրենիքի մի մասի վերադարձման խնդիրները բարձրաձայնի:

– Բայց առանց հայոց պետականության աջակցության Սփյուռքը ոչինչ անել չի կարող:

– Իհարկե չի կարող: Սակայն մենք՝ պարտապաններս, շատ լուրջ այդ հարցերն ուսումնասիրում ենք՝ կապված Սևրի պայմանագրի հետ՝ կապված ցեղասպանության քաղաքականության հետևանքները վերացման հետ, բայց գիտական շրջանակներում բազմաթիվ հետազոտություններ, գիտաժողովներ, այդ թվում միջազգային, տեղի են ունենում: Կարծում եմ՝ կգա մի ժամանակ, երբ Թուրքիան արդեն չի կարող պահել տարածքները, որոնք ինքը բռնազավթել է հայոց ցեղասպանության հետևանքով, այդ հարցերը կդառնան մեր պետականության կարևոր խնդիրները:

– Դուք կուզե՞նայինք որևէ այլ խոսք փոխանցել սյունեցիներին:

– Տասնամյակներ շարունակ ուսումնասիրել եմ և՛ մեր ժողովրդի պատմությունը, և՛ Թուրքիայի պատմությունը, ու կարող եմ ասել՝ հայ ժողովուրդը մեծ ժողովուրդ է, մենք հազարամյակների ընթացքում ամենածանր պայմաններում պահպանել ենք մեր ինքնությունը, և մեր պետականությունն ամրակալելով՝ պիտի վստահությամբ նայենք ապագային: Համոզված եմ՝ այն հողի մի փոքր հատվածի վրա, որ կա Հայաստանի Հանրապետության վերականգնելու հարցը հզոր պետականությունն իր բնական սահմաններով: Սա պետք է լինի այն գաղափարը, որ կհամախմբի Հայաստանի Հանրապետությանը, Արցախի Հանրապետությանը և Սփյուռքին: Ու այդ գաղափարը, նպատակն իրականացնելու ճանապարհով կգնանք առաջ...

ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ և ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Նշվեց բանակի 30-րդ տարեդարձը

Կորուսվորուսի համավարակի ահագնացման հետ կապված՝ մարզկենտրոնում հայոց զինված ուժերի 30-րդ տարեդարձին նվիրված զանգվածային միջոցառումներ չանցկացվեցին: Այնուամենայնիվ, օրվա խորհրդին պատշաճող ցերեկային եղանակով, դրանցից մեկը Շմավոն Մովսիսյանի անվան Կապանի պատմության թանգարանում էր: Մշակույթի այդ օջախի հարևանությամբ գտնվող թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակները և սաները թանգարանի՝ Արցախյան երեք պատերազմի նահատակների հիշատակը հավերժացնող սրահում հանդես եկան գրական-երաժշտական համադրությունով, որը նվիրեցին 44-օրյա պատերազմում նահատակված մանկապարտեզի նախկին սաներ Տիրան Պետրոսյանի, Սերյոժա Լալաբեկյանի և Գոռ Անդրեասյանի հիշատակին:

Երգչուհիներ էլ են Գրիգորյանը և Անուշ Դավթյանը կատարեցին ազգային-հայրենասիրական երգեր: Ընդ որում՝ էլ են Գրիգորյանը հնչեցրեց իր «Աղոթք ազգի փրկության» հեղինակային երգը՝ ծնված 44-օրյա պատերազմի հույզերից ու ապրումներից: Համերգային ծրագիրը ներառում էր պարային կատարումներ. «Նարա Դանս» համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Նարինե Մովսիսյան) ներկայացրեց «Իմ հերոս» պարային բեմադրությունը:

Ներկաները ամուր ոգի մաղթեցին հայոց բանակին, հայ զինվորին՝ բարի և անփորձանք ծառայություն՝ մեկ անգամ և շեշտելով, որ հանրապետության անվտանգության և խաղաղության միակ երաշխավորը հայոց բանակն է, նրա հայրենասեր զինվորն ու սպան:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Արցախում 35 զինվորական բնակարան է ստացել

Հունվարի 31-ին բնակարանամուտի հերթական արարողությունն է տեղի ունեցել Մարտակերտ քաղաքում, որտեղ սոցիալական կարևորագույն խնդրի լուծման հանգրվանին են հասել ՊԲ-ի գործող և պահեստագործի ևս 35 զինվորական: Ինչպես հաղորդում են Արցախի ՊԲ-ից, նոր բնակարանների վկայագրերն անձամբ հաս-

ցեատերերին է հանձնել և շնորհավորակն խոսքեր ուղղել ԱՀ ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կամո Վարդանյանը: Բնակարանները հատկացվել են ՊԲ-ի գործող հերթացուցակի համաձայն՝ վիճակահանության միջոցով:

Նոր բնակարանները տրամադրվել են հիմնականում նորակառուց շենքից, կառուցված են տիպային չափորոշիչներին համապատասխան և ապահովված կեցության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:

Հաշվի առնելով խնդրի՝ անչափ զգալուն լինելու հանգամանքը և արդարության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը, գործընթացը խստագույնս վերահսկվում է բանակի հրամանատարության ու ոլորտի պատասխանատուների կողմից:

HY.ARM.RADIO.AM



Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը

Սկիզբը՝ էջ 3

զային հանրությունը՝ ի դեմս ՄԱԿ-ի, արձագանքելով հակամարտությունների ընթացքում մշակութային կոթողների դիտավորյալ ոչնչացման հաճախակի դարձած դեպքերին, մշակել է դիրքորոշում, ըստ որի՝ մշակութային օբյեկտների ոչնչացումը պատերազմական հանցագործություն է և հավասարեցվում է ահաբեկչական գործողություններին:

Աղբյուրներում հատուկ հանձնաժողովի ստեղծումը, որը կփոխակերպի հայկական մշակութային և կրոնական կոթողները՝ դրանց հետագա յուրացմամբ, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի միջանկյալ միջոցների կիրառման մասին որոշման կոպիտ խախտում է: Դրանք պաշտոնական Բաքվից պահանջում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի և պղծման գործողությունները, որոնք վերաբերում են հայկական մշակութային ժառանգությանը, ներառյալ, բայց չափմանափակվելով եկե-

ղեցիներով և պաշտամունքի այլ վայրերով, հուշարձաններով, տեսարժան վայրերով, գերեզմանատներով և արտեֆակտներով: Որոշումը պարտադիր ուժ ունի Աղբյուրների համար: Բաքվի հրաժարումը կատարել այն ցուցադրում է Բաքվի մտադրությունը խափանել, թեկուզև տեղային մակարդակով, միջազգային հարաբերությունների համակարգը, որն ապահովում է միջազգային խաղաղություն և անվտանգություն:

Եվս մեկ անգամ կոչ ենք անում միջազգային հանրությանը և մասնագիտացված միջազգային կազմակերպություններին անհապաղ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ պարտադրելու Բաքվին՝ կատարել իր միջազգային պարտավորությունները՝ պահպանելով և հարգելով հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, և լիարժեք կերպով կատարել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի միջանկյալ միջոցների կիրառման մասին որոշումը:

WWW.NKR.AM, 09.02.2022

Վերադարձավ հաղթողի դափնիով

Նելլի քոչս թոռնուհին՝ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտուհի Եվա Միքայելյանը, Երևանից վերադարձել է հաղթողի դափնիով: Հունվարի 28-30-ը մայրաքաղաքի «Գազարոմ-Արմենիա» մարզահամալիրում կայացել է գեղարվեստական մարմնամարզության Նատալյա Ռոտենբերգի անվան գավաթի մրցաշար, որին շուրջ 170 մարմնամարզուհի է մասնակցել Երևանից, Գյումրիից, Կապանից և Քաջարանից:



Կապանի գեղարվեստական մարմնամարզության մասնկապատանեկան մարզադպրոցի սանուհին 2011-2014 թթ. ծնված նազելիների մրցապայքարում հավասարը չի ունեցել՝ ելույթ է ունեցել գեղարվեստի և օղակով ու կանգնել է պատվով պատվանդանի ամենաբարձր հարթակին:

Ի սրտե շնորհավորում են կրտսեր զար-

մուհու և նրա մարզիչ Լուսինե Առուստամյանին՝ այն հաստատ համոզումով, որ հաջորդ հաղթանակը երկար սպասելի չի տա:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ստեղծագործում են դպրոցականները. Սաթենիկ Ավետիսյան



Ես, որ ծնվել եմ քո մի բուռ հողից, ես, որ սնվել եմ քո բարիքներով, ես, որ ապրել եմ քո տաքուկ գրկում, Որ մեծացել եմ՝ աչքերս հառած Քո ջիւղ Մասիսի հավերժ ծյուներին, Կո՛վել եմ քեզ հետ, ապրել, արարել, Քո անհուն սրտի մի զարկն եմ դարձել... Ու երբ թշնամին անկարգ խմբերով Համարձակվել է դեմքդ տրորել, Այդ այրող ցավից ես էլ եմ այրվել... Երբ արյունարբու, ժանտ հրոսակը Ճարակ է դարձրել քո լի շենքը, Քեզ հետ միասին ես եմ միացել... Իսկ երբ հավաքվել, ոտքի ես կանգնել, Որ հանդիմանես քո բաժին բախտին, Ես ծառս եմ եղել, բարձր գոռացել, Արդար գանգատող հասցրել երկինք... Երբ հուսահատվել և քիչ էր մնում անդունդ գործելու, Ես եմ քո ձեռքից բռնել ու փրկել: Ու երբ ապրել ես, ես էլ եմ ապրել, Հին, խոր վերքերդ ծաղկունքով լցրել... Ես քո մի շիվն եմ, իմ մայր Հայաստան, Ու թե կյանքս տամ՝ քեզ պաշտպանելով, Նորից կընձյուղվեմ ու հավերժ կապրեմ միայն քեզանով:

Սովորում է Խնձորեսկի Գաբեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում: Վերջերս մասնակցել է լրագրության դասընթացների և աչքի ընկել հետաքրքիր առաջարկներով ու դեպքերի յուրօրինակ վերլուծությամբ:

Շատ ու բազմազան նախասիրություններ ունի, երաժշտասեր է, նվիրյալ ընթերցող, փորձում է ստեղծագործել թե՛ արձակ, թե՛ չափածո:

Նրա «Ես մի շիվն եմ իմ հողի» բանաստեղծությունը՝ ստորև:

Բարև, Հայաստան, Ես եմ քո որդին,

ՄՐՅՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆԸ Գործիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական բույսերի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569 -Ն որոշմամբ հաստատված՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 4-րդ կետի համաձայն՝ Գործիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական բույսերի Լիզադր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
- 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ Լուսինյանացման քարտի պատճենը,
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
- 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,
- 5) ինքնակենսագրություն: Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին ամօժեռ ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են՝ Գործիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական բույսերում, հասցեն՝ ք. Գորիս, Առաքելյան 32, ս.թ. փետրվարի 10-ից մինչև մարտի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 17:30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից: Մրցույթը տեղի կունենա 2022 թ. մարտի 14-ին՝ ժամը 14:00-ին, Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական բույսերում, հասցեն՝ ք. Գորիս, Առաքելյան 32: Տեղեկությունների համար դիմել՝ 094 280906, grvikayvazyan@mail.ru

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրկնորոշ ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկիրին» պարտադիր է: Թղթակցությունները կարող են գրվածքային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 10.02.2022թ.: